ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №3

/հայտերի գնահատման և հաստատման նիստի/

«ՄՀ-ԳՀԱՊՁԲ-19/12» գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գ. Մայիսյան

17 մայիսի 2019թ
ժամը 14:30

ՀՀ Շիրակի մարզ Մարմաշեն համայնքապետարան գյուղ Մայիսյան, փողոց 1, շենք 29 հասցեում

Մասնակցում էին

Հանձնաժողովի
նախագահ՝ Արփինե Կարապետյան */Մարմաշենի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար/*

Հանձնաժողովի
Անդամներ՝ Արտաշես Դրմեյան */Մարմաշենի համայնքի ղեկավարի օգնական/*

Թերեզա Մինասյան */Մարմաշենի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ/*

Հանձնաժողովի
քարտուղար՝ Սաթենիկ Մաղաքյան */Մարմաշենի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակից/*

1. Հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) գնահատման մասին

Ընդունել ի գիտություն, որ

Մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները.

«Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

Մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում Արևային վահանակի մատակարարված լինելը:

սույն ենթակետի նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի

նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Մասնակցի <<Մասնագիտական փորձառություն>> որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար:
Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

<<Տեխնիկական միջոցներ>> որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝.

մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների առկայության մասին

եթե մասնակիցը ճանաչվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից, ապա վերջինս սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին է ներկայացնում կնքվելիք պայմանագրի կատարման ընթացքում օգտագործման ենթակա տեխնիկական միջոցների տվյալները, դրանց տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները:

Մասնակցի <<Տեխնիկական միջոցներ>> որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար:
Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

<<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:
«Գնումների գործընթացի կազմակերպման մասին » ՀՀ Կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ ՀՀ կառավարությանմ առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրվել է եզրակացություն առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների,
Համաձայն վերը նշված եզրակացության առաջին տեղը զբաղեցրած մասնակիցները՝

- Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի ,
- հայտը ներկայացվելու նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից,
- հայտը ներկայացնելուն նախորդ հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

Մասնակցի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար:
Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

<<Աշխատանքային ռեսուրսներ>> որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին.

եթե մասնակիցը ճանաչվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից, ապա վերջինս սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին է ներկայացնում առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները:

Մասնակցի «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար:
Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

«ՄՀ-ԳՀԱՊՁԲ-19/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից սահմանված ժամկետում ներկայացրել է որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող բոլոր փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

1. Գնանշման հարցման ընթացակարգի գնահատման արդյունքների հաստատման և ընտրված մասնակցի որոշման մասին

Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից իրականացված գնահատման արդյունքները հանձնաժողովը որոշեց՝ հաստատել գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի գնահատման արդյունքները:

Հ/Հ	Մասնակիցը	Հայտի գնահատականը
1	«Շտիգեն» ՍՊԸ	բավարար

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ կետը՝ *«ՄՀ-ԳՀԱՊՁԲ-19/12»* ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի **ընտրված մասնակից** հայտարարել՝

1 չափաբաժինների մասով «Շտիգեն» ՍՊԸ–ին,

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ-0

2. Պայմանագիր կնքելու որոշումը և անգործության ժամկետը հաստատելու մասին

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակել տեղեկագրում և անգործության ժամկետ սահմանել տեղեկագրում հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 5-րդ օրացուցային օրը ներառյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

Հանձնաժողովը որոշեց գնանշման հարցման ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել ընտրված մասնակիցների հետ պայմանագրեր կնքելու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 14:00-ին, ՀՀ Շիրակի մարզ Մարմաշեն համայնքապետարան, գյուղ Մայիսյան, փողոց 1, շենք 29 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

Հանձնաժողովի
Նախագահ՝ _____ Արփինե Կարապետյան
/ստորագրություն

Հանձնաժողովի
անդամ՝ _____ Արտաշես Դրմեյան
/ստորագրություն

Հանձնաժողովի
Անդամ՝ _____ Թերեզա Մինասյան
/ստորագրություն

Հանձնաժողովի
Քարտուղար՝ _____ Սաթենիկ Մաղաքյան
/ստորագրություն